Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2020 թվականի ապրիլի 30-ի N 9 - 2 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ,
ռեկտորի պաշտոնակատար
_____ Դ. Գալոյան
30 ապրիլի 2020 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», ՀՊՏՀ կանոնադրությունը:

2. ՀՊՏՀ առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը տեղի է ունենում ըստ հավելվածի մասնագիտությունների:

3. ՀՊՏՀ առկա ուսուցմամբ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձինք: Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները երկրորդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

4. Մագիստրատուրայի ընդունելությունը (փաստաթղթերի ընդունում և քննությունների կազմակերպում) իրականացնելու նպատակով ձևավորվում է ընդունող հանձնաժողով՝ ռեկտորի նախագահությամբ: Մասնագիտական շեմային քննությունների անցկացման համար ռեկտորի հրամանով, ըստ շնորհվող որակավորումների, ձևավորվում են քննական հանձնաժողովներ՝ համապատասխան որակավորման մագիստրոսական ծրագրեր իրականացնող ամբիոնների վարիչների անդամակցությամբ:

5. Օտարերկրյա բուհերի շրջանավարտների ընդունելությունը կատարվում է մասնագիտական քննական հանձնաժողովի անցկացրած հարցազրույցի արդյունքների, ուսումնական և արտաքին կապերի բաժինների կարծիքների հիման վրա՝ ընդունող հանձնաժողովի որոշմամբ:

6. Առկա մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է հետևյալ կերպ.

6.1. Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ընդունելության կարող են մասնակցել միայն ՀՊՏՀ առկա և հեռակա բակալավրիատի 2019/2020 ուսումնական տարվա համապատասխան որակավորման աստիճան ունեցող այն շրջանավարտները, որոնց դիպլոմի հավելվածում գրանցված ուսումնառության բոլոր կիսամյակների հանրագումարայի միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է առնվազն 17,01:

Թափուր տեղերի առկայության դեպքում մրցույթին կարող են մասնակցել նաև տվյալ որակավորման աստիճան ունեցող այլ բուհեր ավարտած դիմորդները:

Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ ըստ դիմորդների ՄՈԳ-երի (հարյուրերորդականի ճշտությամբ):

Դիմորդների հավասար ՄՈԳ-ի պարագայում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները՝

- գերազանցության դիպլոմի առկայությունը.
- ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացած միավորը.
- մասնագիտական և մասնագիտացման առարկաներից ստացած միավորների գումարը:

Բանակից զորացրված դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում տվյալ կրթական ծրագրով առկա անվճար ուսուցման մագիստրատուրայի ընդունելության մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել ՀՊՏՀ բակալավրի համապատասխան որակավորում ունեցող, պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և վերջին երեք օրատարվա ընթացքում զորացրված դիմորդները: Ընդունելությունը կատարվում է առանց շեմային քննության, մրցութային կարգով՝ նախորդ ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված ՄՈԳ-ի հիման վրա: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը:

Անվճար ուսուցման համակարգի մրցույթից դուրս մնացած պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված դիմորդները կարող են մասնակցել վճարովի համակարգի ընդունելությանը՝ մրցութային կարգով: Պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և ավելի քան երեք տարի առաջ զորացրված դիմորդների ընդունելությունը կատարվում է միայն վճարովի համակարգում՝ մրցութային կարգով: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը:

6.2. Առկա ուսուցման մագիստրատուրայի բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի) համակարգ կարող են դիմել ՀՊՏՀ և այլ պետական ու ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բուհերի առկա և հեռակա ուսուցման ընթացիկ և նախորդ տարիների բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող շրջանավարտները:

Սահմանված տեղերի շրջանակներում, առանց շեմային քննության, ընդունելության մրցույթին կարող են մասնակցել համապատասխան որակավորման աստիճան ունեցող ՀՊՏՀ շրջանավարտները: ՀՊՏՀ համապատասխան որակավորման աստիճան չունեցող դիմորդները ընդունելությանը մասնակցելու համար պետք է հանձնեն կրթական ծրագրերին համապատասխան շեմային քննություն:

Այլ բուհերի դիմորդները ընդունելությանը մասնակցելու համար կրթական ծրագրերին համապատասխան պետք է հանձնեն շեմային քննություն՝ անկախ որակավորումից:

Դիմորդն իր հայտագրած կրթական ծրագրի (ծրագրերի) համար շեմային քննություն է հանձնում ըստ հավելվածի:

7. Ըստ ՄՈԳ-երի՝ ընդունելության մրցույթին սահմանված տեղերի շրջանակներում մասնակցում են համապատասխան որակավորման աստիճան ունեցող ՀՊՏՀ շրջանավարտները, ինչպես նաև ՀՊՏՀ համապատասխան որակավորման աստիճան չունեցող շրջանավարտները և այլ բուհերի շրջանավարտները, ովքեր դրական գնահատական են ստացել շեմային քննությունից:

8. Դիմում-հայտում դիմորդը կարող է հայտագրել 2 (երկու) մագիստրոսական կրթական ծրագիր՝ ըստ նախապատվության: Հայտում նշված առաջին ծրագրի չբացվելու կամ մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդը մասնակցում է երկրորդ ծրագրի մրցույթին: Ծրագիրը չի բացվում, եթե ուսանողների թիվը չի համապատասխանում ՀՊՏՀ գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 18-ի N 2 որոշմամբ սահմանված պահանջին: Եթե դիմորդի հայտագրած ծրագրերից ոչ մեկը չի բացվում, ապա ընդունող հանձնաժողովը նրան առաջարկում է որևէ այլ կրթական ծրագիր, որտեղ առկա են թափուր տեղեր՝ տվյալ կրթական ծրագրի մուտքային պահանջները բավարարելու կամ շեմային քննությունը հանձնելու պայմանով:

9. Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1) մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ (լրացվում է առցանց),
2) բարձրագույն կրթության դիպլոմի և դրա հավելվածի բնագրերն ու պատճենները կամ ակադեմիական տեղեկանքը (տվյալ տարվա այն շրջանավարտների դեպքում, ովքեր դեռ չեն ստացել ավարտական փաստաթուղթը),
3) անձնագրի լուսապատճենը,
4) 3 x 4 սմ չափի թվային լուսանկար,
5) զինվորական գրքույկի (առկայության դեպքում) կամ կցագրման վկայականի լուսապատճենը,
6) վերջին 3 (երեք) տարվա ընթացքում ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները, ովքեր տվյալ մասնագիտության գծով մասնակցում են բանակից զորացրվածների (ԲԶ) համար հատկացված տեղերի մրցույթին, ներկայացնում են նաև տեղեկանք զինկոմիսարիատից (լուսապատճեն)՝ ծառայությունից զորացրվելու վերաբերյալ,
7) դիմորդի առանձնահատուկ կարգավիճակը (արտոնությունը) հավաստող փաստաթղթի լուսապատճենը:

10. ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության, ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի երեխա լինելու, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դառնալու, առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխա լինելու մասին):

11. Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի համար դիմորդների փաստաթղթերն ընդունվում են առցանց՝ 2020 թվականի հունիսի 16-ից 30-ը ներառյալ:

12. Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի) տեղերի համար դիմորդների փաստաթղթերն ընդունվում են առցանց, 2 (երկու) փուլով. առաջին

փուլ՝ 2020 թվականի հունիսի 16-ից 30-ը ներառյալ, երկրորդ փուլ՝ 2020 թվականի օգոստոսի 1-ից 26-ը ներառյալ: Առաջին փուլի դիմորդները շեմային քննությունը հանձնում են 2020 թվականի հուլիսի 3-ին, ժամը 11:00-ին, երկրորդ փուլի դիմորդները՝ 2020 թվականի օգոստոսի 27-ին, ժամը 11:00-ին: Դիմորդները շեմային քննությունը հանձնում են բանավոր: Ընդունելության առաջին փուլի արդյունքները հրապարակվում են մինչև 2020թ. հուլիսի 7-ը, իսկ երկրորդ փուլինը՝ մինչև 2020թ. օգոստոսի 31-ը:

13. Ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում փաստաթղթերն ընդունվում են առցանց՝ մինչև սույն թվականի օգոստոսի 26-ը ներառյալ, մրցույթն ամփոփվում է 2020թ. օգոստոսի 27-ին:

14. Առկա ուսուցմամբ վճարովի մագիստրատուրա ընդունված դիմորդների վերջնական հրամանագրումը կատարվում է առաջին կիսամյակի ուսման վարձի վճարման թույլտվություն ստանալուց հետո առաջին կիսամյակի նվազագույնը առաջին ամսվա ուսման վարձը վճարելու և վճարման կտրոնը մինչև սույն թվականի սեպտեմբերի 10-ը ընդունող հանձնաժողով ներկայացնելու դեպքում:

Հավելված

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2020-2021 ուսումնական տարվա՝ առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության մասնագիտությունները

Դասիչը, մասնագիտությունը	Դասիչը, կրթական ծրագիրը	Անվճար տեղերի քանակը	Վճարովի տեղերի քանակը	Ուսման վարձի չափը (դրամ)	Ուսման տևողությունը	Շեմային քննությունը
1	2	3	4	5	6	7
031101.00.7, Տնտեսագիտություն		**22 (1 ԲՀ)**	**88**			
031101.00.7, Տնտեսագիտություն	031101.02.7, Տնտեսագիտության տեսություն			700000	1,5 տարի (երեկոյան)	Տնտեսագիտության տեսություն
031101.00.7, Տնտեսագիտություն	031101.04.7, Միջազգային տնտեսական հարաբերություններ			570000	2 տարի (ցերեկային)	Միջազգային տնտեսական հարաբերություններ
031101.00.7, Տնտեսագիտություն	031101.06.7, Բնօգտագործման տնտեսագիտություն			520000	2 տարի (ցերեկային)	Բնօգտագործման տնտեսագիտություն
031101.00.7, Տնտեսագիտություն	031101.08.7, Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ			520000	2 տարի (ցերեկային)	Տնտեսական գործընթացների մոդելավորում
031101.00.7, Տնտեսագիտություն	031101.13.7, Ձեռնարկատիրական գործունեություն			520000	2 տարի (ցերեկային)	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում
031101.00.7, Տնտեսագիտություն	031101.15.7, Տնտեսության պետական կարգավորում			700000	1,5 տարի (երեկոյան)	Մակրոտնտեսական կարգավորում
031101.00.7,	031101.16.7, Մակրոտնտեսական			700000	1,5 տարի	Մակրոտնտեսական

Տնտեսագիտություն	վերլուծություն				(երեկոյան)	կարգավորում
031101.00.7, Տնտեսագիտություն	031101.21.7, Նորարարությունների տնտեսագիտություն			700000	1,5 տարի (երեկոյան)	Նորարարությունների տնտեսագիտություն
041101.00.7, Հաշվապահական հաշվառում և հարկում		**16 (1 ԲՀ)**	**34**			
041101.00.7, Հաշվապահական հաշվառում և հարկում	041101.01.7, Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/			700000	1,5 տարի (երեկոյան)	Հաշվապահական հաշվառում
041101.00.7, Հաշվապահական հաշվառում և հարկում	041101.03.7, Աուդիտ			700000	1,5 տարի (երեկոյան)	Աուդիտ
041201.00.7, Ֆինանսներ		**24 (1 ԲՀ)**	**116**			
041201.00.7, Ֆինանսներ	041201.02.7, Ապահովագրական գործ			700000	1,5 տարի (երեկոյան)	Ապահովագրական գործ
041201.00.7, Ֆինանսներ	041201.03.7, Հանրային ֆինանսներ			620000	2 տարի (ցերեկային)	Ֆինանսներ
041201.00.7, Ֆինանսներ	041201.04.7, Կորպորատիվ ֆինանսներ			620000	2 տարի (ցերեկային)	Ֆինանսներ
041201.00.7, Ֆինանսներ	041201.05.7, Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում			620000	2 տարի (ցերեկային)	Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում
041201.00.7, Ֆինանսներ	041201.06.7, Բանկային գործունեության			700000	1,5 տարի (երեկոյան)	Բանկային գործ

	կազմակերպում					
041201.00.7, Ֆինանսներ	041201.08.7, Մաքսային վարչարարություն			700000	1,5 տարի (երեկոյան)	Միջազգային տնտեսական հարաբերություններ
041301.00.7, Կառավարում		**19 (1 ԲՀ)**	**211**			
041301.00.7, Կառավարում	041301.04.7, Գործարար վարչարարություն (կառավարում)			700000	1,5 տարի (երեկոյան)	Մենեջմենթ
041301.00.7, Կառավարում	041301.11.7, Զբոսաշրջության կառավարում			620000	2 տարի (ցերեկային)	Մենեջմենթ
041301.00.7, Կառավարում	041301.13.7, Նախագծերի կառավարում			620000	2 տարի (ցերեկային)	Մենեջմենթ
041301.00.7, Կառավարում	041301.15.7, Կառավարման տեղեկատվական համակարգեր			520000	2 տարի (ցերեկային)	Կառավարման տեղեկատվական համակարգեր
041301.00.7, Կառավարում	041301.17.7, Հանրային կառավարում			700000	1,5 տարի (երեկոյան)	Մենեջմենթ
041301.00.7, Կառավարում	041301.20.7, Հողագույքային հարաբերություններ			520000	2 տարի (ցերեկային)	Հողագույքային հարաբերություններ
041301.00.7, Կառավարում	041301.27.7, Մարդկային ռեսուրսների կառավարում			700000	1,5 տարի (երեկոյան)	Մենեջմենթ
041301.00.7, Կառավարում	041301.28.7, Բուժհաստատությունների կառավարում			1200000	1 տարի (երեկոյան)	Մենեջմենթ
041301.00.7, Կառավարում	041301.31.7, Առողջապահության կառավարում և վարչարարություն			1200000	1 տարի (երեկոյան)	Մենեջմենթ

041301.00.7, Կառավարում	041301.32.7, Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում			700000	1,5 տարի (երեկոյան)	Կառավարման տեղեկատվական համակարգեր
041301.00.7, Կառավարում	041301.33.7, Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում			700000	1,5 տարի (երեկոյան)	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում
041401.00.7, Շուկայագիտություն (մարքեթինգ)		**12 (1 ԲՁ)**	**73**			
041401.00.7, Շուկայագիտություն (մարքեթինգ)	041401.03.7, Մարքեթինգային հետազոտություններ			570000	2 տարի (ցերեկային)	Մարքեթինգ
041401.00.7, Շուկայագիտություն (մարքեթինգ)	041401.04.7, Մարքեթինգային հաղորդակցություններ			570000	2 տարի (ցերեկային)	Մարքեթինգ
041401.00.7, Շուկայագիտություն (մարքեթինգ)	041401.06.7, Բիզնեսի կազմակերպում			700000	1,5 տարի (երեկոյան)	Բիզնես տնտեսագիտություն և պլանավորում
041401.00.7, Շուկայագիտություն (մարքեթինգ)	041401.07.7, Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում			700000	1,5 տարի (երեկոյան)	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում
056201.00.7 Վիճակագրություն		**2**	**18**			
056201.00.7 Վիճակագրություն	056201.04.7 Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն			700000	1,5 տարի (երեկոյան)	Վիճակագրություն
		95 (5 ԲՁ)	**540**			